ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3204 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ՎԱՐԴԱՇԵՆԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 42 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԵՂՁԱՆԻԿ ԲԵԳԼԱՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ՀՈՎՍԵՓ ՍԱՄՎԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻ, ՄԵՐՈՒԺԱՆ ԼԻՊԱՐԻՏԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դեղձանիկ Բեգլարի Ստեփանյանի (ծնված 10.01.1964թ.), Հովսեփ Սամվելի Դավթյանի (ծնված 20.03.1985թ.), Մերուժան Լիպարիտի Դավթյանի (ծնված 29.06.1947թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Վարդաշենի 5-րդ փողոցի հ.42 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 460.34քմ, որից 411քմ մակերեսով հողամասը Դեղձանիկ Բեգլարի Ստեփանյանին, Հովսեփ Սամվելի Դավթյանին, Մերուժան Լիպարիտի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 08.04.1997թ. հ.178): Օրինական հողամասին կից օգտագործվող 49.34քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 13.02.2009թ. հ.3-1046, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 17.04.2009թ. հ.20/2-Ե/252 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 15.04.2009թ. հ.20-Ել-3388 եզրակացությունը, համաձայն որի Վարդաշենի 5-րդ փողոցի հ.42 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի հաշվառման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Վարդաշենի 5-րդ փողոցի հ.42 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Դեղձանիկ Բեգլարի Ստեփանյանի, Հովսեփ Սամվելի Դավթյանի, Մերուժան Լիպարիտի Դավթյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ օրինական 411քմ մակերեսով հողամասին կից

49.34քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 49.34քմ մակերեսով հողամասի նկատմամբ։

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

3. Վարդաշենի 5-րդ փողոցի հ.42 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Վարդաշենի 5-րդ փողոցի հ.42 տուն>>։

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Դեղձանիկ Բեգլարի Ստեփանյանի, Հովսեփ Սամվելի Դավթյանի, Մերուժան Լիպարիտի Դավթյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ